ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ՍԱՍՍՏԵՔՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26»«հոկտեմբերի»2026 թվական N 3071 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հոկտեմբերի 22-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, «ՍԱՍՍՏԵՔՍ» ՍՊ Ընկերության (ՀՎՀՀ՝ 00467596, տնօրեն՝ Հաջիկ Գելիջի) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

«ՍԱՍՍՏԵՔՍ» ՍՊ Ընկերության, անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են սեփականության (օգտագործման) իրավունքով իրեն պատկանող քաղաք Գյումրի, Ղանդիլյան փողոց 51, Ղանդիլյան փողոց 51/9, Ղանդիլյան փողոց 51/10, Ղանդիլյան փողոց 51/11, Ղանդիլյան փողոց 59/3 հասցեների շինությունների համար:

Վճարման ենթակա գումարը 2026 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ, Ղանդիլյան փողոց 51 հասցեի համար, կազմել է՝ 787.522 (յոթ հարյուր ութսունյոթ

հազար հինգ հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 707.040 (յոթ հարյուր յոթ հազար քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 80.482 (ութսուն հազար չորս հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

Վճարման ենթակա գումարը 2026 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ, Ղանդիլյան փողոց 51/9 հասցեի համար, կազմել է՝ 182.182 (մեկ հարյուր ութսուներկու հազար մեկ հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 158.027 (մեկ հարյուր հիսունութ հազար քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 24.155 (քսանչորս հազար մեկ հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

Վճարման ենթակա գումարը 2026 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ, Ղանդիլյան փողոց 51/10 հասցեի համար, կազմել է՝ 219.563 (երկու հարյուր տասնինը հազար հինգ հարյուր վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 190.452 (մեկ հարյուր իննսուն հազար չորս հարյուր հիսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 29.111 (քսանինը հազար մեկ հարյուր տասնմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

Վճարման ենթակա գումարը 2026 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ, Ղանդիլյան փողոց 51/11 հասցեի համար, կազմել է՝ 361.112 (երեք հարյուր վաթսունմեկ հազար մեկ հարյուր տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 312.587 (երեք հարյուր տասներկու հազար հինգ հարյուր ութսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 48.525 (քառասունութ հազար հինգ հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

Վճարման ենթակա գումարը 2026 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ, Ղանդիլյան փողոց 59/3 հասցեի համար, կազմել է՝ 2.587 (երկու հազար հինգ հարյուր ութսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 2.357 (երկու հազար երեք հարյուր հիսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 230 (երկու հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

Գումարը հաշվարկվել է 2026 թվականի առաջին կիսամյակը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղեկանքները):

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով

պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226 հոդվածի համաձայն՝ հաշվառող մարմինները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 224-րդ հոդվածի 1-ին մասի, 225-րդ հոդվածի 1-ին մասի, 226 հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. «ՍԱՍՍՏԵՔՍ» ՍՊ Ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել ընդամենը՝ 1.552.966 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսուներկու հազար ինը հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 1.370.463 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 182.503 (մեկ հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր երեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. «ՍԱՍՍՏԵՔՍ» ՍՊ Ընկերությանը եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՍԱՍՍՏԵՔՍ» ՍՊ Ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Восстановимая подпись

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2026 թվականի № 3072-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑ 4/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №22032021) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արտյոմ Սարգսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №18921-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի 7-րդ փողոց 4/2 հասցեում գտնվող անշարժ գույքը (վկայական №22032021) վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մուշ-2 թաղամասի 7-րդ փողոց, 7 առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արտյոմ Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 26 >> հոկտեմբերի 2026 թվականի N 3073-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԵՆ ԾԱՌՈՒԿԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով, 161-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, ցանկի 16-րդ կետով և հիմք ընդունելով Կարեն Ծառուկի Մալխասյանի 2026 թվականի հոկտեմբերի 23-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Ծառուկի Մալխասյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 8 աշխատանքային օր և ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 2026 թվականի հոկտեմբերի 27-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 8 աշխատանքային օր և ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 4 աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 11-ը ներառյալ:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Կարեն Ծառուկի Մալխասյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Հրաչիկ Շիրակի Վարդանյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Ծառուկի Մալխասյանին և Հրաչիկ Շիրակի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2026 թվականի N 3074 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ՕԳՆԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԳԱԳԻԿԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանի դատավորի օգնական Շ. Ասատրյանի 2026 թվականի հոկտեմբերի 23-ի ԴԴԱ-7-Ե-ՀԿԴ/0024/01/26 գրությունը, Կարապետ Գագիկի Ղուկասյանի 2026 թվականի հոկտեմբերի 26-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական Կարապետ Գագիկի Ղուկասյանի կասեցումը համարել վերացված՝ 2026 թվականի հոկտեմբերի 27-ից:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2026 թվականի N 3075-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ N 201 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ա.Հովհաննիսյանի գրությունը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հոկտեմբերի 10-ին N 17858 թվագրմամբ) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Շիրակացի 201 հասցեում գտնվող շենքը անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրելու վերաբերյալ» N 37-Ա որոշումը՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2467515) Շիրակացի փողոց N 201 հասցեի 991,57 (ինը հարյուր ինսունմեկ ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հասարակական նշանակության շենքը, դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության 0,0790127 (զրո ամբողջ յոթ հարյուր ինսուն հազար հարյուր քսանյոթ հազար տասնմիլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը 30 (երեսուն) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ հիմնանորոգելու և որպես համաբուժարան օգտագործելու նպատակով:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-26 17:16:02 GMT+4

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2026 **թվականի** N 3076-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ N 14 ՀԱՍՑԵԻ 159,06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 397,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՈՒՇ ՄԱՆՎԵԼԻ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի 3-րդ նրբանցքի N 14 հասցեի 397,8 (երեք հարյուր իննսունյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15092026-08-0042 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 14-ի N 188-Ա որոշումը և քաղաքացի Անուշ Մանվելի Սարդարյանի դիմումը (մուտքագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի մայիսի 07-ին N 6540 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի 3-րդ նրբանցքի N 14 հասցեի 159,06 (մեկ հարյուր հիսունինն ամբողջ վեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով 678550 (վեց հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Անուշ Մանվելի Սարդարյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի 3-րդ նրբանցքի N 14 հասցեի 397,8 (երեք հարյուր իննսունյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 1878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 747068 (յոթ հարյուր քառասունյոթ հազար վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Անուշ Մանվելի Սարդարյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացի Անուշ Մանվելի Սարդարյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Անուշ Մանվելի Սարդարյանի միջոցների հաշվին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անուշ Մանվելի Սարդարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2026 թվականի № 3077-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ ՕՂԱԿԱՅԻՆ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ)ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Կարեն Գևորգյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №18973-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի օղակային 15 հասցեում գտնվող սեփականության իրավունքով քաղաքացի Կարեն Գևորգյանին պատկանող անշարժ գույքին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Արևելյան շրջանցող ճանապարհ, 32 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարեն Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2026 թվականի №3078-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 64 (ՎԿԱՅԱԿԱՆ №30092026-08-0016) ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 64/3 (ՎԿԱՅԱԿԱՆ №26022018-08-0008) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ամալյա Հովհաննիսյանի լիազորված անձ Սասուն Թամազյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №18760-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Շահումյան փողոց 64 (վկայական №30092026-08-0016) և Շահումյան փողոց 64/3 (վկայական №26022018-08-0008) անշարժ գույքերի միավորումից առաջացող անշարժ գույքը հասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Գ. Կոտովսկու փողոց, 1-ին նրբանցք, 9 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ամալյա Հովհաննիսյանի լիազորված անձ Սասուն Թամազյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3 26 06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունվարի 2026 թվականի № 3079-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի №2515-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2030-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 01-ի №2515-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված ավտոտնակին, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մ. Աբեղյան փողոց, 1-ին փակուղի, 7 ավտոտնակ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2026 թվականի N 3080-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԱԶԴԱՏ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՓԻԼՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 16/4 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՓԻԼՈՍՅԱՆԻ ԵՎ ԷՄՄԱ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՓԻԼՈՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի հոկտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Վարազդատ Վոլոդյայի Փիլոսյանը (անձնագիր՝ AV0308900, տրված՝ 12.07.2022 թվականին 001-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 25 օգոստոսի 2009 թվականին ծնված Ռուզաննա Վարազդատի Փիլոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №011525) և 28 դեկտեմբերի 2011 թվականին ծնված Էմմա Վարազդատի Փիլոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №165845) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս.Համբարձումյան փողոց 16/4 բնակելի տան մասնաբաժինները:

Վերոնշյալ հասցեի բնակելի տան համասեփականատերեր են հանդիսանում նաև անչափահասներ՝ Ռուզաննա Վարազդատի Փիլոսյանը և Էմմա Վարազդատի Փիլոսյանը (հիմք՝ «3» հոկտեմբերի 2018 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 03102018-08-0034):

Նիստին ներկա գտնվող անչափահասների հայրը՝ Վարազդատ Վոլոդյայի Փիլոսյանը հայտնեց, որ իր ընտանիքին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետության Երևան, Արաբկիր Հ.Էմինի փողոց 16 շենք 1 բնակարանը, որտեղ և ներկա պահին բնակվում են (հիմք՝ «17» մայիսի 2018 թվականին գրանցված անշարժ.գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17052018-01-0056), (հիմք՝ տեղեկանք տրված՝ «21» հոկտեմբերի 2026 թվականին №25/146733-26 Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահասներ՝ Ռուզաննա Վարազդատի Փիլոսյանը և Էմմա Վարազդատի Փիլոսյանը տվել են համաձայնություն իրենց մասնաբաժինները վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Վարազդատ Վոլոդյայի Փիլոսյանի 2026 թվականի հոկտեմբերի 22-ի դիմումը (համայնքապետարանում

մուտքագրված թիվ 19257 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 23-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Վարազդատ Վոլոդյայի Փիլոսյանին (անձնագիր՝ AV0308900)՝ վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 25 օգոստոսի 2009 թվականին ծնված Ռուզաննա Վարազդատի Փիլոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №011525) և 28 դեկտեմբերի 2011 թվականին ծնված Էմմա Վարազդատի Փիլոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №165845) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս.Համբարձումյան փողոց 16/4 բնակելի տան մասնաբաժինները, բնակարանային պայմանները բարելավելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարազդատ Վոլոդյայի Փիլոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հոկտեմբերի 2026 թվական Ն 3081-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՌԻՄԱ ՓԱՅԼԱԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի Ն 3358- Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի՝ Ռիմա Փայլակի Պողոսյանը (անձնագիր՝ AO 0437170, տրված՝ 2025թվականի դեկտեմբերի 25-ին 016-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Գյումրի Կազաչի պոստ թաղամաս 1 դռս 10 հասցեում), 2026 թվականի սեպտեմբերի 14-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ խնդրելով քաղաք Գյումրի Կազաչի պոստ 1դռս 10 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իրեն որպես սեփականություն:

Լենինականի կոմունալ շահագործման մասի զինվորական շրջանի կողմից տրված օրդերի համաձայն Կազաչի պոստ 1շենք 10 հասցեի բնակարանը հատկացվել է Ռազմիկ Բաղդասարի Պողոսյանի 5 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն , կնոջը, տղային, 2 աղջկան (հիմք ՝ Լենինականի կոմունալ շահագործման մասի զինվորական շրջանի կողմից տրված 1971 թվականի մարտի 4-ին տրված №68 օրդեր):

Քաղաքացի՝ Ռազմիկ Բաղդասարի Պողոսյանը մահացել է (հիմք ՝ I-ՌԱ № 582768 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի կոմունալ շահագործման մասի զինվորական շրջանի կողմից տրված 1971 թվականի մարտի 4-ին տրված №68 օրդերը, 2025 թվականի հոկտեմբերի 14-ի Գյումրի 2 բաժնի 42/94/20/280978-25 գրությունը և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2026 թվականի սեպտեմբերի 14-ի տեղեկանքը, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2025 թվականի սեպտեմբերի 18-ի եզրակացությունը, Ռիմա Փայլակի Պողոսյանի անձնագրի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի դրույթներով՝ 2026 թվականի սեպտեմբերի 14-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2026 թվականի հոկտեմբերի 20-ը, դիմումատուն պատշաճ

կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Կարինե Ռազմիկի Խաչատրյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի Կազաչի պոստ թաղամաս 1 շենք 10/1 հասցեի 59.9 (հիսունիննը ամբողջ իննը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 01122025-08-0018 վկայական) :

բ) Գյումրի քաղաք, Կազաչի պոստ 1դոս N 10 բնակարան հասցեագրությամբ 59.9 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով համայնքապատկան անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրվել է հասցե՝ ՀՀ Շիրակի Մարզ, Գյումրի ք,. Կազաչի պոստ թաղամաս 1 շենք 10/1 բնակարան (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 12-ի № 2765-Ա որոշում):

գ) Գյումրի քաղաքի Կազաչի պոստ 1շենքի 10 հասցեի բնակարանը 1971 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի կոմունալ շահագործման մասի զինվորական շրջանի կողմից տրված 1971 թվականի մարտի 4-ին տրված №68 օրդեր):

դ) Քաղաք Գյումրի Կազաչի պոստ 1 շենք, 10 հասցեում հաշվառված բնակվում է Ռիմա Փայլակի Պողոսյանը 1983 թվականից (հիմք՝ 2025 թվականի հոկտեմբերի 14-ի Գյումրի 2 բաժնի 42/94/20/280978-25 գրություն և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2026 թվականի սեպտեմբերի 14-ի տեղեկանք):

ե) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Ռիմա Փայլակի Պողոսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված չէ: (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 16-ի N ԱՏ-16092026-99-0084 տեղեկանք):

զ) Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կազաչի Պոստ, 1 դոս 10 բնակարանի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2025 թվականի սեպտեմբերի 18-ի եզրակացություն):

է) Քաղաքացի՝ Ռիմա Փայլակի Պողոսյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Կազաչի պոստ 1շենքի 10 հասցեի բնակարանը վարձակալել է 1971 թվականից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա որոշման պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու,իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա որոշման՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների՝ կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով՝ վարչական մարմինը քաղաքացի՝ Ռիմա Փայլակի Պողոսյանի դիմումը բավարարել :

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Չեղյալ ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացիներ Կարինե Ռազմիկի Խաչատրյանին, Ռիմա Փայլակի Պողոսյանին,Նարինե Ռազմիկի Շահնազարյանին,Սիմոն Ռազմիկի Պողոսյանին նվիրատվության եղանակով օտարելու դիմումը մերժելու մասին» N 3358- Ա որոշումը:
2. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի Կազաչի պոստ թաղամաս 1 շենք 10/1 հասցեի 59.9 (հիսունինները ամբողջ իննը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝
   1) Ռիմա Փայլակի Պողոսյանին ծնված՝ 1945 թվականին
   որպես սեփականություն :
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Ռիմա Փայլակի Պողոսյանին:
4. Քաղաքացի՝ Ռիմա Փայլակի Պողոսյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ռիմա Փայլակի Պողոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2026.10.27 16:19:18 GMT+4

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ
Փոխարինող

2026թվական քաղաքԳյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 27 >> հոկտեմբերի 2026 թվականի N 3082 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆ ԳԵՈՐԳԻԻ ՁԱՄՈՒԿԱՇՎԻԼԻԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիի 2026 թվականի հոկտեմբերի 22-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2026 թվականի նոյեմբերի 2-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2026 թվականի նոյեմբերի 2-ից 12-ը ներառյալ:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դիրիժոր Արտակ Արտուշի Գրիգորյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիին և Արտակ Արտուշի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

Восстановимая подпись

X

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ
ք.Գյումրի

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հոկտեմբերի 2026 թվականի N 3083Ա

2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ ՏՐՎԱԾ N10/22 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ալեքսան Կարապետյանին և Աննա Խանոյանին Գյումրի քաղաքի Ա. Խաչատրյան փողոց 9/2 հասցեում առևտրի և սպասարկման օբյեկտի նոր կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար 2022 թվականի ապրիլի 8-ին տրվել է N10/22 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. 2022 թվականի ապրիլի 8-ին տրված N10/22 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ալեքսան Կարապետյանին և Աննա Խանոյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

. 3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հոկտեմբերի 2026 թվականի N 3084-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՊԱՐՏԱԿ ԱԶԱՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀՆՈՑԱՎԱՆԻ 1-ԻՆ ՇԱՐՔ № 24 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 37.15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (24.95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԼՈՂԱՎԱԶԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սպարտակ Ազատի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական № 17072026-08-0026) Գյումրի քաղաքի Հնոցավանի 1-ին շարք № 24 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 37.15 (երեսունյոթ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով լողավազան:
Քաղաքացի Սպարտակ Ազատի Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ բնակելի շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ լողավազանը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026UZTXCS ծածկագիրը, քաղաքացի՝ Սպարտակ Ազատի Հովհաննիսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի սեպտեմբերի 30-ին 17461 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Սպարտակ Ազատի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հնոցավանի 1-ին շարք № 24 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 37.15 (երեսունյոթ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով լողավազանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 86039 (ութսունվեց հազար երեսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սպարտակ Ազատի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«27» հոկտեմբերի 2026 **թվականի** N_3085-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՂԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության լողի պատանիների 2026 թվականի նոյեմբերի 13-15-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով լողի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշաման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 26-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության լողի պատանիների առաջնությանը գործուղման ծախսերի 2026 թվականի նոյեմբերի 13-15-ը Երևան քաղաք գործուղել 8 մարզիկի և 2 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս) 30.000(երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թ.
հունվարի 27 N 308-Ա որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության լողի պատանիների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/ մարզիչ	Անձնագիր	Սոցքարտ	Հաշվեհամար	Գումար
1.	Վարոսյան	Վլադիմիր	Մարզիկ	AX 0272859	3627090020	1570099641960100	3.000
2.	Սուվարյան	Արեգ	Մարզիկ	AO 0394149	2331100292	19300823076800	3.000
3.	Ղալաչյան	Ալեն	Մարզիկ	AX 0682440	1221110217	11802062957200	3.000
4.	Խաչատրյան	Վանիկ	Մարզիկ	AU 0385719	2922130384	163000357448	3.000
5.	Խաչատրյան	Մարի	Մարզիկ	AL 0647917	7222110437	1630013273820	3.000
6.	Սիմոնյան	Մելանյա	Մարզիկ	AL 0200645	5829100363	16600880359400	3.000
7.	Սուքիասյան	Մերի	Մարզիկ	AX 0460135	6328130392	1510094361563600	3.000
8.	Էլբակյան	Մանե	Մարզիկ	AL 0480966	6631120330	2472608165890000	3.000
9.	Մխիթարյան	Հրանտ	Մարզիչ	020856597	3014580171	1570021381453800	3.000
10.	Մելքոնյան	Հովհաննես	Մարզիչ	AU 0524249	1507630115	1570021106801000	3.000
Ընդամենը							30.000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հոկտեմբերի 2026 **թվականի** N 3086-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ Մ-16 ՏԱՐԵԿԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ 2026-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան աղջիկների 2026-2027 թվականների առաջնության 2026 թվականի նոյեմբերի 28-ին Երևան քաղաքում կայանալիք 1-ին տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բասկետբոլի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշաման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 26-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան աղջիկների 2026-2027 թվականների առաջնության 1-ին տուրին գործուղման ծախսերի 2026 թվականի նոյեմբերի 7-ին Երևան քաղաք գործուղել 12 մարզիկի և 1 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս և սնունդ) 82.700(ութսուներկու հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թ.
հունվարի 27 N 3086-Ա որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան աղջիկների 2026-2027 թվականների առաջնության 1-ին տուրին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/ մարզիչ	Անձնագիր	Սոցքարտ	Հաշվեհամար	Գումար
1.	Խաչատրյան	Մերի	մարզիկ	AO0332335	6424130284	1510091992759900	6.300
2.	Հարությունյան	Տաթև	մարզիկ	AX0403251	5127120224	16013085492200	6.300
3.	Ֆլիկյան	Գոհար	մարզիկ	AL0319141	7524110375	1510005109911000	6.300
4.	Կոստանյան	Կարինե	մարզիկ	AX0342518	5334130039	1510059523965200	6.300
5.	Գրիգորյան	Մանե	մարզիկ	AO0345661	7321130290	1510079953109500	6.300
6.	Շահինյան	Թամարա	մարզիկ	AX0302823	7334130111	24100685415200	6.300
7.	Մինասյան	Գայանե	մարզիկ	AX0388013	5121120249	220373622202000	6.300
8.	Թորոսյան	Անի	մարզիկ	AY0230045	6932120461	11802072739200	6.300
9.	Մկրտչյան	Մանե	մարզիկ	AX0418392	5824110263	220540841099000	6.300
10.	Հունանյան	Մարիամ	մարզիկ	AO0354911	7731120511	1570030838038300	6.300
11.	Հակոբյան Հակոբյան	Սյուզի Հասմիկ	Մարզիկ ծնող	AS0450604	8105860139	1570075778187700	6.300
12.	Սարիբեկյան	Մարիամ	մարզիկ	AO0451204	8130130365	11802068600200	6.300
13.	Գալոյան	Մելինե	մարզիչ	AR0215784	6023010199	15100145885158	7.100
Ընդամենը							**82.700**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հոկտեմբերի 2026 թվականի N3087-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՂԱՍԻ ՀԱՅԿԻ(2/6 ՄԱՍ), ՌՈՒԶԱՆՆԱ ՍԵՐԳԵՅԻ(1/3 ՄԱՍ), ՎԱՀԵ ԱՐՄԵՆԻ(1/9 ՄԱՍ), ԼԻԼՅԱ ԱՐՄԵՆԻ(1/9 ՄԱՍ) ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՋԵՄՄԱ ԼԵՎՈՆԻ ՄԱԶՄԱՆՅԱՆԻՆ(1/9 ՄԱՍ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ԱՆՑՈՒՄ № 22 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 171.87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 105.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Աղասի Հայկի(2/6 մաս), Ռուզաննա Սերգեյի(1/3 մաս), Վահե Արմենի(1/9 մաս), Լիլյա Արմենի(1/9 մաս) Գրիգորյաններին և Ջեմմա Լևոնի Մազմանյանին(1/9 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր № 17388,17390,17389 տրված 2026 թվականի սեպտեմբերի 24-ին, № 5708 տրված 2025 թվականի օգոստոսի 19-ին, № 7641 տրված 2010 թվականի նոյեմբերի 10-ին) Գյումրի քաղաքի Հ. Սարգսյան փողոց 1-ին անցում № 22 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 105.2 (մեկ հարյուր հինգ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 264.88(երկու հարյուր վաթսունչորս ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Աղասի Գրիգորյանի լիազորված անձ Հայկ Գրիգորյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026BBVTNT ծածկագիրը և հաշվի առնելով քաղաքացի Աղասի Գրիգորյանի լիազորված անձ Հայկ Գրիգորյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հոկտեմբերի 7-ին № 18097 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Աղասի Հայկի(2/6 մաս), Ռուզաննա Սերգեյի(1/3 մաս), Վահե Արմենի(1/9 մաս), Լիլյա Արմենի(1/9 մաս) Գրիգորյաններին և Ջեմմա Լևոնի Մազմանյանին(1/9 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հ. Սարգսյան փողոց 1-ին անցում № 22 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 171.87(մեկ հարյուր յոթանասունմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
3.Ճանաչել քաղաքացիներ Աղասի Հայկի(2/6 մաս)(ծնված 1951 թվականի հոկտեմբերի 24-ին), Ռուզաննա Սերգեյի(1/3 մաս)(ծնված 1967 թվականի օգոստոսի 19-ին), Վահե Արմենի(1/9 մաս) (ծնված 2017 թվականի մարտի 3-ին), Լիլյա Արմենի(1/9 մաս)(ծնված 2023 թվականի հունիսի 20-ին) Գրիգորյաններին և Ջեմմա Լևոնի Մազմանյանին(1/9 մաս)(ծնված 1996 թվականի հունիսի 11-ին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հ. Սարգսյան փողոց 1-ին անցում № 22 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 105.2 (մեկ հարյուր հինգ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների:
4.Ինքնակամ թողնել քաղաքացիներ Աղասի Հայկի(2/6 մաս), Ռուզաննա Սերգեյի(1/3 մաս), Վահե Արմենի(1/9 մաս), Լիլյա Արմենի(1/9 մաս) Գրիգորյաններին և Ջեմմա Լևոնի Մազմանյանին(1/9 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հ. Սարգսյան փողոց 1-ին անցում № 22 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 93.01 (իննսուներեք ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ձեղնահարկը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աղասի Գրիգորյանի լիազորված անձ Հայկ Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
6.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հոկտեմբերի 2026 թվականի N 3088-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՏԱՇԵՍ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՅԿՈՒՀԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 26 ՀԱՍՑԵԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ, ԱՆՓՈՓՈԽ ԳԾԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱԽԿԻՆ ՉԱՓԱԳՐՈՒՅԱՆ ՄԵՋ ՏԵՂ ԳՏԱԾ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 26,26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Թամանյան փողոց N 26 հասցեի հասարակական նշանակության շինության զբաղեցրած հողամասը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով (հիմք՝ ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20122021-08-0065վկայական) պատկանում է քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանին և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանին: Ներկայացվել է նոր չափագրություն ըստ որի նախկին վկայականում եղած և ներկա չափագրությունով ներկայացված հողամասի կողմնային չափերը նույնն են, սակայն նախկին վկայականում հողամասի մակերեսը թվաբանական սխալի պատճառով սխալ է հաշվարկվել, որի պատճառով առաջացել է 26,26(քսանվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերոսով տարբերություն:

Քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանի և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանի լիազորված անձ Արթուր Ստեփանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ Թամանյան փողոց N 26 հասցեի նշված շինության տարածքում թվաբանական սխալի պատճառով առաջացած ավել օգտագործվող 26,26(քսանվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը իրենց օտարելու խնդրանքով :

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով, 72 հոդվածի 2-րդ կետով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից տրամադրված ճշգրտված չափագրությունը և եզրակացությունը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 14-ի N 192-Ա որոշումը, հաշվի առնելով առնելով Արտաշես Ռուբենի Սարգսյանի և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանի լիազորված անձ

Արթուր Ստեփանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հոկտեմբերի 12-ին N 18384 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1 Քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանին և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թամանյան փողոց N 26 հասցեի շինության հողամասում թվաբանական սխալի պատճառով առաջացած 26,26(քսանվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը օտարել ուղղակի վաճառքի միջոցով :

2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514(տաս հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 քառակուսի մետր քառակուսի մետրի դիմաց, ընդհամենը՝ 276097(երկու հարյուր յոթանասունվեց հազար իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանի և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանի միջոցների հաշվին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանի և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանի պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» Հոկտեմբերի 2026 թվականի N 3089 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ N67 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 27.22 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 27.22 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (23.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գորկու փողոց N67 շենքի հարևանությամբ 27.22(քսանյոթ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 27.22(քսանյոթ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (23.0(քսաներեք) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Սուսաննա Մովսիսյանը:

Նկատի ունենալով, որ շինությունների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026KGVWQB ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Գորկու փողոց N67 շենքի հարևանությամբ 27.22(քսանյոթ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 27.22(քսանյոթ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (23.0(քսաներեք) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սուսաննա Մովսիսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Սուսաննա Մովսիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվականի № 3090-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի №3009-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂԱՍԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Աղասի Մաթևոսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №19309-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 20-ի №3009-Ա որոշմամբ քաղաքացի Աղասի Մաթևոսյանի սեփականության իրավունքը ճանաչված հողամասին և դրա վրա առկա բնակելի տանը տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Դեկաբրիստների փողոց, 45 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աղասի Մաթևոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2026 թվականի №3091-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 6-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2842587) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ալվարդ Մելքոնյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №18022-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թումանյան փողոց 6-րդ նրբանցք 14 հասցեում գտնվող բնակելի տունը (վկայական №2842587) վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հ. Թումանյան փողոց, 6-րդ նրբանցք, 10 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ալվարդ Մելքոնյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2026 թվականի № 3092-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 64.99 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0618-0008-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2150-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոցի հարևանությամբ գտնվող 64.99 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0618-0008-ից) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Նար-Դոսի փողոց, 21 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվականի № 3093-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Լ. ՄԱԴՈՅԱՆ (ՖՐՈՒՆԶԵԻ) ՓՈՂՈՑ 49Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Աննա Նահապետյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №18557-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լ. Մադոյան (Ֆրունզեի) փողոց 49ա հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Լ. Մադոյան փողոց, 49/1 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աննա Նահապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվականի № 3094-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ 2 ԹԱՂԱՄԱՍ 18 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 736.98 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2222-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 18 հասցեի բնակելի տան հարևանությամբ գտնվող 736.98 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ **Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Պ. Դուրյան փողոց, 18/1 հողամաս**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվականի №3095 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 169/1 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 121.11 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2096-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 169/1 հասցեի հարևանությամբ գտնվող 121.11 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ղ. Ղուկասյան փողոց, 1-ին փակուղի, 7 հողամաս
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» հունվարի 2026 թվականի № 309Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂԻ 3 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 166.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/2135-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղի 3 հասցեի հարևանությամբ գտնվող 166.6 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մարմաշենի խճուղի, 3/1 հողամաս
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2026 թվականի №3097-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆՏԱՌԱՎԱՆ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 53/2 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 88.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Հ/2162-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անտառավան 3-րդ թաղամաս 53/2 հասցեի հարևանությամբ գտնվող 88.01 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ **Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հ. Աճառյան փողոց, 1-ին նրբանցք, 10/1 հողամաս**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2026 թվականի № 3098-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԿՐՏՉՅԱՆ 7-ՐԴ ՇԱՐՔ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արման Սարգսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №18706-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Մկրտչյան 7-րդ շարք 11 հասցեում գտնվող քաղաքացի Արման Սարգսյանին պատկանող հողամասը վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մ. Մկրտչյան փողոց, 63/5 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արման Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2026 թվականի № 3099-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ, 4-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 420,1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0261-0001-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/1536-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարսի խճուղի, 4-րդ փակուղու հարևանությամբ գտնվող 420,1 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0261-0001-ից) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Կարսի խճուղի, 4-րդ փակուղի, 6 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հունվարի 2026 թվականի №3100-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ 2 ԹԱՂԱՄԱՍ 18 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 734.90 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2221-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 18 հասցեի բնակելի տան հարևանությամբ գտնվող 734.90 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ **Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Պ. Դուրյան փողոց, 2-րդ նրբանցք, 1/1 հողամաս**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվականի №3101-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի №2928–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2179-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 12-ի №2928–Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված ավտոտնակին, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Տիգրան Մեծի փողոց, 4-րդ նրբանցք, 24/1 ավտոտնակ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«28» Հունվարի 2026 թվականի №3102-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի №2483-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2181-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 28-ի №2483-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված ավտոտնակին, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ա. Շիրակացու փողոց, 169/4 ավտոտնակ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հունվարի 2026 թվականի N 3103-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար սուբվենցիոն ծրագրի շրջանակում էլեկտրոնային աճուրդի միջոցով էլեկտրական ավտոբուսների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Հանձնաժողովի նախագահ՝

   1) Հովսեփ Սիմոնյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

   Հանձնաժողովի անդամներ՝

   2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

   3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

   4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

   5) Լևոն Սարոյան - համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ,

   Հանձնաժողովի քարտուղար՝

   6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվականի N 3104-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար սուբվենցիոն ծրագրի շրջանակում էլեկտրոնային աճուրդի միջոցով էլեկտրական ավտոբուսների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Գագիկ Ավետիսյան - համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի պետի պարտականությունները կատարող,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովհաննես Եգանյան - Գյումրի համայնքի փորձագետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվականի N 3105-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԼՈՒՍԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով լուսազդանշանների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Անահիտ Խաչատրյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի ժամանավոր պաշտոնակատար,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվականի N 3106-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԼՈՒՍԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով լուսազդանշանների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Անդրանիկ Չադրյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հարություն Մխիթարյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի տեղակալ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հունվարի 2026 **թվականի** N 3107-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻՄԻՐՅԱԶԵՎԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 158,86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 81,53 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 61,24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոցի հարևանությամբ 158,86 (մեկ հարյուր հիսունութ ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ն ինքնակամ կառուցվել է 81,53 (ութսունմեկ ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 61,24 (վաթսունմեկ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արթուր Սերյոժայի Քաղցրիկյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 2023ARP935 տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոցի հարևանությամբ 158,86 (մեկ հարյուր հիսունութ ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և դրա վրա ինքնակամ կառուցված 81,53 (ութսունմեկ ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 61,24 (վաթսունմեկ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Արթուր Սերյոժայի Քաղցրիկյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արթուր Սերյոժայի Քաղցրիկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» ապրիլի 2026 **թվականի** N 3108-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 03-Ի N 1086-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 30 հասցեի 384,0 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա ինքնակամ կառուցված 416,37քառակուսի մետր արտաքին, 333,98 քառակուսի մետր ներքին մակերեսով բազմաբնակարան շենքն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 1086-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 30 հասցեի 384,0 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա ինքնակամ կառուցված 416,37քառակուսի մետր արտաքին, 333,98 քառակուսի մետր ներքին մակերեսով բազմաբնակարան շենքն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 1086-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Վերնագրում «416,37» և «333,98» թվերը համապատասխանաբար փոխարինել «250,61» և «199,35» թվերով,
   2) Նախաբանում և որոշման 1-ին կետում «416,37 (չորս հարյուր տասնվեց ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 333,98 (երեք հարյուր երեսուներեք ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին» թվերը և բառերը փոխարինել «250,61 (երկու հարյուր հիսուն ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 199,35 (մեկ հարյուր իննսունինն ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին» թվերով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 **թվականի** N 3109-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԻԿՈԼԱՅ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նիկոլայ Թումանյանի (ՀՎՀՀ՝ 57451309, գրանցման ամսաթիվը՝ 2023 թվականի հունվարի 26-ին) 2026 թվականի հոկտեմբերի 23-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 23-ին 19394-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Նիկոլայ Թումանյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան 2 հասցեում իրականացնել տեխնիկական հեղուկների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Նիկոլայ Թումանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

Восстановимая подпись

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվականի N 3110-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ռ. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ N 2/12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 148.47 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (117.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ 650.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՄՍՈՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ռ. Դանիելյան փողոց № 2/12 հասցեի 650.8 (վեց հարյուր հիսուն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 14092026-08-0025 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 14-ի № 188-Ա որոշումը, քաղաքացի՝ Սվետլանա Սամսոնի Եղիազարյանի լիազորված անձ Արմեն Ջուլբերտ Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի ապրիլի 1-ին N 4530 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Ռ. Դանիելյան փողոց № 2/12 հասցեի 148.47 (մեկ հարյուր քառասունութ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (117.1(մեկ հարյուր տասնյոթ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 877012 (ութ հարյուր յոթանասունյոթ հազար տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սվետլանա Սամսոնի Եղիազարյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ռ. Դանիելյան փողոց № 2/12 հասցեի 650.8 (վեց հարյուր հիսուն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 2890853 (երկու միլիոն ութ հարյուր իննսուն հազար ութ հարյուր հիսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Սվետլանա Սամսոնի Եղիազարյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Սվետլանա Սամսոնի Եղիազարյանին պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սվետլանա Սամսոնի Եղիազարյանի լիազորված անձ Արմեն Ջուլբերտ Խոցանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Սվետլանա Սամսոնի Եղիազարյանի միջոցների հաշվին:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվական N3111-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ԼՅՈՎԱՅԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արամ Լյովայի Նահապետյանը (անձնագիր՝ AV0325714, տրված՝ 2022 թվականի հուլիսի 19-ին 065-ի կողմից, հաշվառված՝ Գյումրի, Երևանյան խճուղի շենք 159ա, 3 հասցեի բնակարանում), 2026 թվականի հոկտեմբերի 8-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող պարոն Ա. Առաքելյանին՝ խնդրելով քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 159Ա շենքի 3 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին՝ որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2002 թվականի հուլիսի 25-ի №590 որոշմամբ տրված № 3 միասնական օրդերով Երևանյան խճուղի 159Ա շենքի 3 հասցեի բնակարանը հատկացվել է Նահապետյան Արտաշի 5 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, 2 տղաներին, հարսին և թոռին:

Քաղաքացի Արտաշ Արամի Նահապետյանը մահացել է (հիմք՝ ԲԱ №484357 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2002 թվականի հուլիսի 25-ի №590 որոշմամբ տրված № 3 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 29-ի և հոկտեմբերի 5-ի №260651065224, №26065065566 և №26065065567 տեղեկանքները, «Երևանյան 157ա» համատիրության 2026 թվականի սեպտեմբերի 25-ի տեղեկանքը, քաղաքացիներ Լյովա Արտաշի Նահապետյանի, Ռիմա Ռաֆիկի Միքայելյանի, Պատվական Արտաշի Նահապետյանի և Արամ Լյովայի Նահապետյանի անձնագրերի պատճենները, Արտաշ Արամի Նահապետյանի մահվան վկայականի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման

մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակ մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա որոշման դրույթներով 2026 թվականի հոկտեմբերի 8-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2026 թվականի հոկտեմբերի 22-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Արամ Լյովայի Նահապետյանի մասնակցությամբ, նրան բացատրվել է օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 159Ա շենքի 3 հասցեի 61,9 (վաթսունմեկ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ № 1153856 վկայական):

բ) Քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 159Ա շենքի 3 հասցեի բնակարանը 2002 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2002 թվականի հուլիսի 25-ի №590 որոշմամբ տրված № 3 միասնական օրդեր):

գ) Շիրակ Գյումրի Երևանյան խճուղի 159Ա 3 հասցեում հաշվառված բնակվում են 3 անձինք՝ Նահապետյան Լյովա Արտաշի (20.10.2006 թվականից), Միքայելյան Ռիմա Ռաֆիկի (20.10.2006 թվականից), Նահապետյան Արամ Լյովայի (09.03.2007 թվականից) (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 29-ի և հոկտեմբերի 5-ի №260651065224, №26065065566 և №26065065567 տեղեկանքները, «Երևանյան 157ա» համատիրության 2026 թվականի սեպտեմբերի 25-ի տեղեկանքը):

դ) ՀՀ տարածքում քաղաքացի Լյովա Նահապետյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 157ա շենք, 31 բնակարանի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք:

1988 թ.-ի մարտի 1-ից առ այսօր ՀՀ տարածքում վերոնշյալ քաղաքացու կողմից Շիրակի մարզ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 157ա շենք, 31 բնակարանի նկատմամբ կատարվել է ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում /10.09.2021թ./, օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 14-ի № US-14092026-99-0500 տեղեկանք):

ՀՀ տարածքում քաղաքացի Ռիմա Ռաֆիկի Միքայելյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 157ա շենք, 31 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք:

1988 թ.-ի մարտի 1-ից առ այսօր ՀՀ տարածքում վերոնշյալ քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 157ա շենք, 31 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ /ձեռքբերման ամսաթիվ՝ 15/09/2021թ./, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 14-ի № US-14092026-99-0497 տեղեկանք):

ՀՀ տարածքում քաղաքացի Պատվական Արտաշի Նահապետյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

1988 թ.-ի մարտի 1-ից մինչ օրս վերոնշյալ քաղաքացու անվամբ ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման /ձեռքբերման ամսաթիվ՝ 27.08.2003թ./, միաժամանակ օտարման /օտարման ամսաթիվ՝ 01.10.2025թ./ գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է մարզ Շիրակ, համայնք Արթիկ, քաղաք Արթիկ, Անկախության փողոց 24 շենք, 2 բնակարանի նկատմամբ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 15-ի № ՍՏ-15092026-99-0607 տեղեկանք):

ՀՀ տարածքում քաղաքացի Արամ Լյովայի Նահապետյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Երևանյան խճուղի 159/8 ավտոտնակ հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք:

Վերոնշյալ քաղաքացու անվամբ ՀՀ տարածքում 1998 թվականից առ այսօր անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակ մարզ, համայնք Գյումրի ք. Երևանյան խճուղի 159/8 ավտոտնակ հասցեով անշարժ գույքի /գրանցման ամսաթիվ՝ 25.07.2024թ./ նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 14-ի № ՍՏ-14092026-99-0491 տեղեկանք):

ե) Քաղաքացի Արամ Լյովայի Նահապետյանի ընտանիքը քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 159Ա շենքի 3 հասցեի բնակարանը վարձակալել է 2002 թվականից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա որոշման՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու,իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն,

այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա որոշման՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

ՀՀ տարածքում քաղաքացի Լյովա Նահապետյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 157ա շենք, 31 բնակարանի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք:

1988 թ.-ի մարտի 1-ից առ այսօր ՀՀ տարածքում վերոնշյալ քաղաքացու կողմից Շիրակի մարզ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 157ա շենք, 31 բնակարանի նկատմամբ կատարվել է ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում /10.09.2021թ./, օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 14-ի № ՍՏ-14092026-99-0500 տեղեկանք):

ՀՀ տարածքում քաղաքացի Ռիմա Ռաֆիկի Միքայելյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 157ա շենք, 31 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք:

1988 թ.-ի մարտի 1-ից առ այսօր ՀՀ տարածքում վերոնշյալ քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 157ա շենք, 31 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ /ձեռքբերման ամսաթիվ՝15/09/2021թ./, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 14-ի № ՍՏ-14092026-99-0497 տեղեկանք):

ՀՀ տարածքում քաղաքացի Պատվական Արտաշի Նահապետյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

1988 թ.-ի մարտի 1-ից մինչ օրս վերոնշյալ քաղաքացու անվամբ ՀՀ տարածքում անշարժ գույքի [illegible] /[illegible] ամսաթիվ՝ 27.08.2003թ./ [illegible] /[illegible]

ասթիվ՝ 01.10.2025թ./ գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է մարզ Շիրակ, համայնք Արթիկ, քաղաք Արթիկ, Անկախության փողոց 24 շենք, 2 բնակարանի նկատմամբ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 15-ի № ԱՏ-15092026-99-0607 տեղեկանք):

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Արամ Լյովայի Նահապետյանի դիմումը մասնակի բավարարեց:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաք Գյումրի, Երևանյան խճուղի 159Ա շենքի 3 հասցեի 61,9 (վաթսունմեկ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Արամ Լյովայի Նահապետյանին՝ ծնված՝ 1991 թվականին՝ որպես սեփականություն:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Արամ Լյովայի Նահապետյանին:

3. Քաղաքացի Արամ Լյովայի Նահապետյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արամ Լյովայի Նահապետյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի

համայնքի ղեկավարին փոխարինող՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թվական քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» հոկտեմբերի 2026 թվականի N 3112-Լ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հաստատել 2026 թվականի հոկտեմբերի 29-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման, ֆիզկուլտուրայի և սպորտի, քաղաքաշինության և հողօգտագործման բաժինների գլխավոր մասնագետների թափուր պաշտոնների համար անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի
2026 թվականի հոկտեմբերի 28-ի N 3112 -Լ որոշման

ԿԱԶՄ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Մեքինյան Սարգիս- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական

2. Անտոնյան Արամ- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

3.Էլբակյան Սամսոն-Գյումրի համայնքի ավագանու անդամ

4.Տոնոյան Արտաշես- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

5. Էլոյան Ասատուր – Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի տ.գ. թ. դոցենտ

6.Սահակյան Սեդրակ-Գյումրի համայնքի ղեկավարի օգնական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հունվարի 2026 թվականի N 3113 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԵՄԲԵՐԻ 15-ԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի մայիսի 11-ի N 23-Լ հրամանով հաստատված ուղեցույցի «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 127-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը էլեկտրոնային համակարգի միջոցով աճուրդով օտարելու համար հայտարարել աճուրդ, որը կկայանա 2026 թվականի դեկեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 18-ը ներառյալ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2026 թվականի հոկտեմբերի 29
N 3113-Ա որոշման

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գյումրի համայնքը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2026 թվականի դեկեմբերի 15-ի ժամը 11^{00}-ից մինչև դեկտեմբերի 18-ի ժամը 11^{00} ներառյալ: https:/ /www.e-auctions.am կայքի միջոցով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 127-Ա որոշման համաձայն օտարման ենթակա ներքոհիշյալ անշարժ գույքը

Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը (հասցե)	Լոտի կադաստրային ծածկագիրը	Շինության ընդհանուր մակերեսը (քառ.մ.)	Հողամասի ընդհանուր մակերեսը (քառ.մ.)	Անշարժ գույքի գնահատված արժեքը (ՀՀ դրամ)	Լոտի մեկնարկային գինը (ՀՀ դրամ)	Նախավճարի չափը (ՀՀ դրամ)
1.	Հ. Շիրազի փողոց N 30/3	08-001-0751-0036	1207,83	434,02	62 275 300	113 000 000	

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարան /հասցեն՝ ք.Գյումրի, Վարդանանց հր. 1, 0312 2.22.29/: համայնքապետարանում /Վարդանանցիր. 1/, ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի ինտերնետային կայքում՝ www.gyumricity.am:

Աճուրդին մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձիք (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք

- Էլեկտրոնային համակարգում մասնակիցների գրանցումն իրականացվում է առցանց եղանակով (www.e-auctions.am) էլեկտրոնային համակարգում, գրանցումը իրականացվում է ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի:
- Աճուրդի մասնակցության համար էլեկտրոնային համակարգում (www.e-auctions.am) գրանցվելուց և մուտք գործելուց հետո e-payments համակարգի միջոցով ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 5 րոպե առաջ վճարել նախավճարը:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցն ստորագրված արձանագրությունն ու պահանջվող փաստաթղթերը աճուրդի կայացման օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը առցանց եղանակով փոխանցում է կազմակերպիչին, արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հաղթողը պարտավոր է փոխանցել լոտի գինը ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը՝ 900215301574 հաշվեհամարին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հոկտեմբերի 2026 թվականի N 3114 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 01-Ի N 1639-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 01-ի N 1639-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է Հայաստանի Հանրապետության Կադաստրի Կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 30/06/2026 որոշման պատճատով(փաստաթղթի համար՝ Կ-30062026-08-0267):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով **որոշում եմ՝**.

1. 2026 թվականի հունիսի 01-ի «Քաղաքացի Ռոման Թորգոմի Ղազարյանին պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 5-րդ շարք N 35 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 14,81 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը, եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 159,28 քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա շինությունների կարգավիճակի մասին» N 1639-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Նախաբանի 1-ին պարբերության 4-րդ տողում «շինություններ» բառից հետո լրացնել «որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2026LFEPYA և 20268SSSBQ ծածկագրերով:».
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռոման Թորգոմի Ղազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հոկտեմբերի 2026 թվականի N3115-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 2510-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2026 թվականի սեպտեմբերի 01-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանին և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թամանյան փողոց № 26 հասցեի օրինական հողանասին կից ավել օգտագործվող 14,8 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N 2510-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հոկտեմբերի 2026 թվականի N3116-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 27/2 ՀԱՍՑԵԻ 217,13 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 892,77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ «ՎԱ-ԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 27/2 հասցեի 217,13 (երկու հարյուր տասնյոթ ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հասարակական շինությունը և 892,77 (ութ հարյուր իննսուներկու ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08092026-08-0015 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N 153-Ա որոշումը և «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սեդրակ Բարախյանի դիմումը (մուտքագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 30-ին N 5805 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 27/2 հասցեի 217,13 (երկու հարյուր տասնյոթ ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով 3847760 (երեք միլիոն ութ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով հասարակական շինությունը օտարել տվյալ կառույցն իրականացրած «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որպես սեփականություն:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 27/2 հասցեի 892,77 (ութ հարյուր իննսուներկու ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 3964351 (երեք միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որպես սեփականություն:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:

4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Սեդրակ Բարախյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հոկտեմբերի 2026 թվականի N 3117-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ԱՃԱՌՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ N 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 67.53 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (55.36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ 126.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳՈՀԱՐ ՅՈՒՐԻԿԻ(1/4ՄԱՍ), ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳԻ(1/4ՄԱՍ), ԱՐՄԱՆ ԱՐԹՈՒՐԻ (1/4ՄԱՍ) ԵՎ ԱՐՄԵՆ ԱՐԹՈՒՐԻ(1/4ՄԱՍ) ՉԱԽԱԼՅԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Հ. Աճառյան փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի № 3 հասցեի 126.69 (մեկ հարյուր քսանվեց ամբողջ վաթսունհինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 22092026-08-0003 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 14-ի № 188-Ա որոշումը, քաղաքացի՝ Գոհար Յուրիկի Չախալյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 8-ին N 8737 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Հ. Աճառյան փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի № 3 հասցեի 67.53 (վաթսունյոթ ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (55.36(հիսունհինգ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 398899 (երեք հարյուր իննսունութ հազար ութ հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Գոհար Յուրիկի(1/4մաս), Արթուր Գևորգի(1/4մաս), Արման Արթուրի (1/4մաս) և Արմեն Արթուրի(1/4մաս) Չախալյաններին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ. Աճառյան փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի № 3 հասցեի 126.69 (մեկ հարյուր քսանվեց ամբողջ վաթսունհինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 562756 (հինգ հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Գոհար Յուրիկի(1/4մաս), Արթուր Գևորգի(1/4մաս), Արման Արթուրի (1/4մաս) և Արմեն Արթուրի(1/4մաս) Չախալյաններին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Գոհար Յուրիկի Չախալյանին պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գոհար Յուրիկի Չախալյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Գոհար Յուրիկի Չախալյանի միջոցների հաշվին:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հոկտեմբերի 2026 թվականի N 3118-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԲԵԼ ԺԵԼՅԱԲԻՆԻ ՉԱՐԽԻՖԱԼԱՔՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԱԲԱՑԻ 4-ՐԴ ՇԱՐՔ N 19/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1278,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 11^{00}-ից մինչև հոկտեմբերի 23-ի ժամը 11^{00}-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք N 19/5 հասցեով (ծածկագիր 08-001-1157-0310) 1278,6 (մեկ հազար երկու հարյուր յոթանասունութ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Աբել Ժելյաբինի Չարխիֆալաքյանը մասնակցելով նշված հողամասի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 12633000 (տասներկու միլիոն վեց հարյուր երեսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն 23 հոկտեմբերի 2026 թվական):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի գ) ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք N 19/5 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 1278,6 (մեկ հազար երկու հարյուր յոթանասունութ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-1157-0310) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի աճուրդում հաղթող ճանաչված Աբել Ժելյաբինի Չարխիֆալաքյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Աբել Ժելյաբինի Չարխիֆալաքյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Աբել Ժելյաբինի Չարխիֆալաքյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աբել Ժելյաբինի Չարխիֆալաքյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԱՐՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«29»«հոկտեմբերի» 2026 թվական N 319 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հոկտեմբերի 27-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Կարապետ Հովհաննեսի Կարոյանի (ՀԾՀ՝3805840276, հասցե՝ ք.Գյումրի, Խրիմյան Հայրիկ 1-ին թաղամաս, 50/14) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Կարապետ Հովհաննեսի Կարոյանի անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի, Թբիլիսյան խճուղու 1-ին թաղամաս 50/14 հասցեի համար:

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 1-ին թաղամաս 50/14 հասցեի համար վճարման ենթակա գումարը 2026 թվականի հուլիսի 08-ի դրությամբ կազմել է՝ 98.538 (իննսունութ հազար հինգ հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 80.676 (ութսուն հազար վեց հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 17.862 (տասնյոթ հազար ութ հարյուր վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարը հաշվարկվել է 2024-2025 թվականների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրված տեղեկանք):

2. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226 հոդվածի համաձայն՝ հաշվառող մարմինները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների

հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 224-րդ հոդվածի 1-ին մասի, 225-րդ հոդվածի 1-ին մասի, 226 հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Կարապետ Հովհաննեսի Կարոյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 98.538 (իննսունութ հազար հինգ հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է՝ 80.676 (ութսուն հազար վեց հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 17.862 (տասնյոթ հազար ութ հարյուր վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Քաղաքացի՝ Կարապետ Հովհաննեսի Կարոյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Կարապետ Հովհաննեսի Կարոյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Восстановимая подпись

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» Հոկտեմբերի 2026 թվականի №3120Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի №2669-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2109-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 18-ի №2669-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված ավտոտնակին, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Տիգրան Մեծի փողոց, 18/2 ավտոտնակ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2026 թվականի №3121-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ, 4-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 420,1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0261-0001-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/1536-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարսի խճուղի, 4-րդ փակուղու հարևանությամբ գտնվող 420,1 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0261-0001-ից) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Կարսի խճուղի, 4-րդ փակուղի, 6 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2026 թվականի №3122-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 113,69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0601-0001-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2226-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շչեդրինի փողոցի հարևանությամբ գտնվող 113,69 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0601-0001-ից) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մ. Շչեդրինի փողոց, 1/15 հողամաս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2026 թվականի №3123-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի №2929-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2178-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 12-ի №2929-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի տանը, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Կ. Տիմիրյազևի փողոց, 27/5 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հոկտեմբերի 2026 թվականի N 3124-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 4/9 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ 400 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Արամ Խաչատրյան փողոց 4/9 հասցեում գտնվող՝ 400 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասը, համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում: Միաժամանակ, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2642633 վկայականի՝ նշված հողամասն ունի բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել հողամասի գործառնական նշանակությունը համապատասխանեցնել տարածական պլանավորման փաստաթղթերով սահմանված գործառնական նշանակությանը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Արամ Խաչատրյան փողոց 4/9 հողամաս հասցեի 400 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համապատասխանեցնելու միջոցով փոփոխել՝ բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակությունից բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստան Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հոկտեմբերի 2026 **թվականի** N 3125-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՇԱՄԻՐԱՄ ՍՈՒՐԵՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ (1/8 ՄԱՍ), ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԳՍԻ ԲԱՐԻԿՅԱՆԻՆ (1/8 ՄԱՍ) ԵՎ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՐԹՈՒՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ (6/8 ՄԱՍ) ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 208 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 96,75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 101,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԿԱՌՈՒՑԱՊԱՏ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Շամիրամ Սուրենի Ղազարյանին (1/8 մաս), Սուսաննա Սարգսի Բարիկյանին (1/8 մաս) և Անուշավան Արթուրի Ստեփանյանին (6/8 մաս) ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2026 թվականի մայիսի 22-ին, N 7658, 7661, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2025 թվականի սեպտեմբերի 12-ին, N 11605) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի N 208 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ն ինքնակամ կառուցված է 96,75 (իննսունվեց ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 20264DRQ5W ծածկագրով և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 101,35 (մեկ հարյուր մեկ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված անկառուցապատ հողամաս:

Քաղաքացի Շամիրամ Սուրենի Ղազարյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի, հիմք ընդունելով քաղաքացի Շամիրամ Սուրենի Ղազարյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի սեպտեմբերի 10-ին N 16313 թվագրմամբ),

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Շամիրամ Սուրենի Ղազարյանին (1/8 մաս), Սուսաննա Սարգսի Բարիկյանին (1/8 մաս) և Անուշավան Արթուրի Ստեփանյանին (6/8 մաս) ժառանգության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի N 208 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 96,75 (իննսունվեց ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացիներ Շամիրամ Սուրենի Ղազարյանի (1/8 մաս) (ծնված 1966 թվականի հունիսի 07-ին), Սուսաննա Սարգսի Բարիկյանի (1/8 մաս) (ծնված 1964 թվականի հուլիսի 26-ին) և Անուշավան Արթուրի Ստեփանյանի (6/8 մաս) (ծնված 1993 թվականի նոյեմբերի 17-ին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ժառանգության իրավունքով իրենց պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի N 208 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 101,35 (մեկ հարյուր մեկ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված անկառուցապատ հողամասի նկատմամբ:

3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Շամիրամ Սուրենի Ղազարյանին, Սուսաննա Սարգսի Բարիկյանին և Անուշավան Արթուրի Ստեփանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հոկտեմբերի 2026 **թվական** N 3126-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՐԴՈՒՀԻ ԿՈՍՏՅԱՅԻ ՄՈՒՏԱՖՅԱՆԻՆ,ՀԱՍՄԻԿ ՌԱԶՄԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ,ՄԿՐՏԻՉ ՌԱԶՄԻԿԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ,ԷՄՄԱ ԱՐԹՈՒՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ,ՀԱՄԼԵՏ ՄԿՐՏԻՉԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ,ՀԱՅԿԱՆՈՒՀԻ ՄԿՐՏԻՉԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ,ՍԻԼՎԻ ՀԱՄԼԵՏԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ,ԱՐՄԵՆ ՀԱՄԼԵՏԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ,ՍԻԼՎԱ ՍԱՄՍՈՆԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Վարդուշ Կոստյայի Մուտաֆյանը (նույնականացման քարտ՝ 018260018, տրված՝ 2025թվականի հունիսի 8-ին 064-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Գյումրի, Խ.Աբովյան փողոց 141 հասցեում), 2026 թվականի սեպտեմբերի 2-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ խնդրելով Գյումրի քաղաքի Խ.Աբովյան փողոց 141 շենք 6 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրական կազմակերպության Շիրակի մարզային մասնաճյուղի 2026 թվականի մայիսի 25-ի Շ-1023 գրությունը, Գյումրի 2 բաժնի 2026 թվականի մայիսի 27-ի 42/94/20/163436-26 գրությունը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի օգոստոսի 26-ի տեղեկանքը, Վարդուշ Կոստյայի Մուտաֆյանի նույնականացման քարտի,Հասմիկ Ռազմիկի Պողոսյանի, Մկրտիչ Ռազմիկի Տոնոյանի անձնագրերի պատճենները, Էմմա Արթուրի Հայրապետյանի,Համլետ Մկրտիչի Տոնոյանի,Հայկանուշ Մկրտիչի Տոնոյանի,Սիլվի Համլետի Տոնոյանի,Արմեն Համլետի Տոնոյանի,Սիլվա Սամսոնի Տոնոյանի լիազորագրերը Գյումրի համայնքից Խ.Աբովյան փողոց 141 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարելու համար Վարդուշ Կոստյայի Մուտաֆյանին լիազորելու վերաբերյալ, 2026 թվականի մայիսի 20-ի «Գյումրի» ցանցի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, Հրաչյա Մուրադյան անհատական ձեռնարկության 2026 թվականի մայիսի 15-ի եզրակացությունը, Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 9-ի N1732-Ա հասցեավորման որոշումը :

1. Քաղաքացի Վարդան Ռազմիկի Հակոբյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գ. Յանիկյան փողոց № 19 հասցեով բնակելի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 1578.46 (մեկ հազար հինգ հարյուր յոթանասունութ ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով Գյումրի համայնքին պատկանող հողամասը:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 1878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 2964347 (երկու միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր քառասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Վարդան Ռազմիկի Հակոբյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վարդան Ռազմիկի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունվարի 2026 **թվական** N 3137-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԱՐԻՍԱ ԴՐԱՍՏԱՄԱՏԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ,ԼԻԱՆԱ ՕԳՍԵՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ,ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ,ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ, ԱՆՆԱ ՖՐՈՒՆԶԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Լարիսա Դրաստամատի Ասատրյանը (անձնագիր՝ AP 0594416, տրված՝ 2016թվականի հոկտեմբերի 11-ին 016-ի կողմից,հաշվառված՝ քաղաք Գյումրի, Կուզնեցովի փողոց 9 հասցեում), 2025 թվականի դեկտեմբերի 9-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ խնդրելով Գյումրի քաղաքի Ն.Կուզնեցովի փողոց 9 հասցեի բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 9-ի Շ-637/74 գրությունը, 2026 թվականի սեպտեմբերի 1-ի Գյումրի 2 բաժնի N 42/94/20/270729-26 գրությունը և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի օգոստոսի 7-ի N 1236 տեղեկանքը, Լարիսա Դրաստամատի Ասատրյանի, Վարդան Օգսենի Ասատրյանի,Աննա Ֆրունզիկի Հարությունյանի, Լիանա Օգսենի Ասատրյանի անձնագրերի, Հարություն Վարդանի Ասատրյանի նույնականացման քարտի, Նարեկ Վարդան Ասատրյանի ծննդյան վկայականի պատճենները, 2026 թվականի օգոստոսի 11-ի «Գյումրի» ցանցի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 10-ի եզրակացությունը, Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 17-ի N 1213-Ա հասցեավորման որոշումը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N 145-Ա որոշման կետերի դրույթներով՝ 2025 թվականի դեկտեմբերի 9-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2026 թվականի հոկտեմբերի 20-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Լարիսա Դրաստամատի Ասատրյանի լիազորված անձ՝ Աննա Ֆրունզիկի Հարությունյանի մասնակցությամբ, նրանց բացատրվել են օրենքով իրենց վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Ն.Կուզնեցովի փողոց 9 հասցեի 78.47 (յոթանասունութ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 19062026-08-0052 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Կուզնեցովի փողոց 9 ֆոնդի տան հատկացման հիմքերը չեն պահպանվել (հիմք ՝«Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 9 -ի Շ-637/74 գրություն):

գ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 24-ի N 740-Ա որոշմամբ պետական գրանցման ներկայացված բնակելի ֆոնդի տանը և դրա փաստացի զբաղեցրած սահմանազատված հողամասին տրամադրվել է հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն.Կուզնեցովի փողոց, 9 բնակելի տուն (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 17-ի N 1213-Ա հասցեավորման որոշում):

գ) Շիրակ Գյումրի Ն.Կուզնեցովի փողոց 9 հասցեում հաշվառված բնակվում են՝ Լարիսա Դրաստամատի Ասատրյանը 1985 թվականից, Լիանա Օգսենի Ասատրյանը 2003թվականից , Վարդան Օգսենի Ասատրյանը 2025 թվականից, Նարեկ Վարդանի Ասատրյանը 2010 թվականից, Աննա Ֆրունզիկի Հարությունյանը 2012 թվականից, Հարություն Վարդանի Ասատրյանը 2026 թվականից (հիմք՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ի Գյումրի 2 բաժնի N 42/94/20/270729-26 գրությունը և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի օգոստոսի 7-ի N 1236 տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ՝ Լարիսա Դրաստամատի Ասատրյանի, Վարդան Օգսենի Ասատրյանի,Աննա Ֆրունզիկի Հարությունյանի, Լիանա Օգսենի Ասատրյանի, Հարություն Վարդանի Ասատրյանի, Նարեկ Վարդան Ասատրյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի օգոստոսի 11-ի N US-11082026-99-0468, N US-11082026-99-0500 N US-11082026-99-0496, 2026 թվականի օգոստոսի 12-ի N US-12082026-99-0192, N US-21032023-99-0191 N US-17032023-99-0388 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի՝ Լարիսա Ասատրյանը /ք. Գյումրի, Կուզնեցովի փողոց 9 տուն/ Գյումրի ցանցում բաժանորդ է 2002 թվականից միչև օրս (հիմք՝«ՀՀ էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության«Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2026 թվականի օգոստոսի 11-ի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտ):

զ) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի կուզնեցովի փողոց 9 տան վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 10-ի եզրակացություն):

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու հաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել Ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում է համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Քաղաքացի՝ Վարդան Օգսենի Ասատրյանը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա որոշումը ՝ վարչական մարմինը քաղաքացի՝ Լարիսա Դրաստամատի Ասատրյանի դիմումը բավարարեց մասամբ:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և
վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Ն.Կուզնեցովի փողոց 9 հասցեի 78.47 (յոթանասունութ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
   1) Լարիսա Դրաստամատի Ասատրյանին ծնված 1954 թվականին,
   2) Լիանա Օգսենի Ասատրյանին ծնված՝ 1987 թվականին,
   3) Նարեկ Վարդանի Ասատրյանին ծնված՝ 2010 թվականին,
   4) Հարություն Վարդանի Ասատրյանին ծնված՝ 2006 թվականին,
   5) Աննա Ֆրունզիկի Հարությունյանին ծնված՝ 1984 թվականին

   որպես ընդհանուր համատեղ սեփականություն հավասար բաժիններով:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Լարիսա Դրաստամատի Ասատրյանին, Լիանա Օգսենի Ասատրյանին, Նարեկ Վարդանի Ասատրյանին,Հարություն Վարդանի Ասատրյանին, Աննա Ֆրունզիկի Հարությունյանին :
3. Քաղաքացիներ՝ Լարիսա Դրաստամատի Ասատրյանին, Լիանա Օգսենի Ասատրյանին, Նարեկ Վարդանի Ասատրյանին, Հարություն Վարդանի Ասատրյանին, Աննա Ֆրունզիկի Հարությունյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Լարիսա Դրաստամատի Ասատրյանին, Լիանա Օգսենի Ասատրյանին ,Նարեկ Վարդանի Ասատրյանին, Հարություն Վարդանի Ասատրյանին, Աննա Ֆրունզիկի Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2026.10.30 14:59:41 GMT+4

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ
փոխարինող

2026թվական քաղաքԳյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հոկտեմբերի 2026 թվականի N 3138-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ № 5 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 91.48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 657 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՄԱՄԻԿՈՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց № 5 Ա հասցեում գտնվող 657 (վեց հարյուր հիսունյոթ) քառակուսի մետր մակերեսով հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է 91.48 (իննսունմեկ ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Գագիկ Մամիկոնի Մինասյանին:

Քաղաքացի Գագիկ Մամիկոնի Մինասյանին դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ հողամասի և շինության նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 38-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Գագիկ Մամիկոնի Մինասյանի՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի սեպտեմբերի 3-ին № 15770 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Ճանաչել քաղաքացի Գագիկ Մամիկոնի Մինասյանի (ծնված 1962 թվականի մարտի 25-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց № 5 Ա հասցեում գտնվող 400.0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 91.48 (իննսունմեկ ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ:

2.Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց № 5 Ա հասցեում գտնվող սահմանված չափից ավել օգտագործվող 257 (երկու հարյուր հիսունյոթ) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Գագիկ Մամիկոնի Մինասյանին (ծնված 1962 թվականի մարտի 25-ին), տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) դրամ 1.0 քառակուսի մետրի դիմաց, ընդամենը 1141594 (մեկ միլիոն մեկ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր իննսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գագիկ Մամիկոնի Մինասյանին պատշաճ կարգով իրազելու օրվան հաջորդող օրվանից:

4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հոկտեմբերի 2026 **թվականի** N 3139-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 03-Ի N 1023-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 2891-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պուշկինի փողոց 2-րդ նրբանցքի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 45.23 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 87.1 քառակուսի մետր արտաքին (75.35 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N 1023-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 5-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պուշկինի փողոց 2-րդ նրբանցքի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 45.23 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 87.1 քառակուսի մետր արտաքին (75.35 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N 1023-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝
   1) Նախաբանի 10-րդ տողում «կետի» բառից հետո լրացնել «և հիմք ընդունելով ինքնակամ շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու վերաբերյալ 2026YHYVLE տեղեկանքը» թվերը և բառերը,
   2) Վերնագրում «45.23», «87.1» և «75.35» թվերը համապատասխանաբար փոխարինել «83,74» թվով,
   3) նախաբանում և որոշման 1-ին կետում «45.23(քառասունհինգ ամբողջ քսաներեք հարյուրերորդական)», «87.1(ութսունյոթ ամբողջ մեկ տասնորդական)» և «75.35(յոթանասունհինգ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական)» թվերը և բառերը համապատասխանաբար փոխարինել «83,74 (ութսուներեք ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական)», «83,74 (ութսուներեք ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական)» և «71,99 (յոթանասունմեկ ամբողջ իննսունինը հարյուրերորդական)» թվերով և բառերով,
   4) Որոշման 1-ին կետում «45.23(քառասունհինգ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում» թիվը և բառերը փոխարինել «ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող 83,74 (ութսուներեք ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասից 41,87 (քառասունմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա» թվերով և բառերով,

5) Որոշման մեջ լրացնել նոր կետեր հետևյալ խմբագրությամբ.
«5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պուշկինի փողոց 2-րդ նրբանցքի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 83,74 (ութսուներեք ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի մյուս 41,87 (քառասունմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հատվածը թողնել առաջին հարկում առկա շինության կառուցման ու սպասարկման համար զբաղեցված հողամաս»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 09-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 03-ի N 1023-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 2891-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունվարի 2026 թվականի N 314-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-114/26» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-114/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով չափագրման ծառայության ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Հանձնաժողովի նախագահ՝

   1) Հովսեփ Սիմոնյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

   Հանձնաժողովի անդամներ՝

   2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

   3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

   4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

   5) Աստղիկ Խաժակյան - Գյումրու համայքնապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ,

   Հանձնաժողովի քարտուղար՝

   6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք. Գյումրի

30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հոկտեմբերի 2026 թվականի N 3141-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-114/26» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-114/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով չափագրման ծառայության ձեռքբերման նպատակով սահմանել՝

2) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Արմինե Սարգսյան – Գյումրու համայքնապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ,

բ. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հովիկ Ղազարյան – Գյումրու համայքնապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հոկտեմբերի 2026 թվականի № 3142-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ 33/5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 685,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 210,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2144-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 07-ի №2862–Ա, 2026 թվականի հոկտեմբերի 19-ի №3001–Ա որոշումները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի 33/5 հասցեի բնակելի տան հողամասին կից 685,3 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 210,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությանը տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Կարսի խճուղի, 3-րդ նրբանցք, 4 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» հոկտեմբերի 2026 թվականի № 3143 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №17062026-08-0034) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Նարինե Հարոյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №17936-2026 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՒՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի, 23 հասցեում գտնվող կաթսայատունը (վկայական №17062026-08-0034) երկու մասերի բաժանելու նպատակով առանձնացված հատվածներին տրամադրել հասցեներ.
   1) **634.00** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝ **Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Խրիմյան Հայրիկի փողոց, 23/1 շինություն**
   2) **9361.44** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝ **Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Խրիմյան Հայրիկի փողոց, 23 կաթսայատուն**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Նարինե Հարոյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«30» հոկտեմբերի 2026 **թվական** Ն 3144-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԱՅԿԱԶ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ,ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀԵՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ՀԱՅԿԱԶԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ՀԱՅԿԱԶԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՅԿԱԶԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Հայկազ Արշալույսի Ասատրյանը (անձնագիր՝ AS0377966, տրված՝ 2018 թվականի սեպտեմբերի 25-ին 016-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Գյումրի Արագած 1 թաղամաս 2 շենքի №10 բնակարանի հասցեում), 2026 թվականի օգոստոսի 14-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով քաղաք Գյումրի Արագած 1 թաղամաս 2 շենքի №10 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին, որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Ժողովրդական պատգամավորների Գյումրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի հունիսի 08-ի №14 որոշմամբ Արագած 1 թաղամաս 2 շենք №10 բնակարանը հատկացվել է Հայկազ Արշալույսի Ասատրյանի 5 ածից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, տղային և 2 աղջիկներին:

Դիմումին կից ներկայացվել է Ժողովրդական պատգամավորների Գյումրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի հունիսի 08-ի №14 որոշմամբ տրված №10 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց 2026 թվականի հուլիսի 31-ի № 42/94/20/238390-26 տեղեկանք, «Վել Մանո» համատիրության 2026 թվականի օգոստոսի 13-ի Վ/մ-5 տեղեկանք, Հայկազ Արշալույսի Ասատրյանի, Ռուզաննա Շահենի Ասատրյանի, Սամվել Հայկազի Ասատրյանի, Գայանե Հայկազի Ասատրյանի և Արշալույս Հայկազի Ասատրյանի անձնագրերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի դրույթներով՝ 2026 թվականի օգոստոսի 14-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2026 թվականի հոկտեմբերի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Հայկազ Արշալույսի Ասատրյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Արագած 1 թաղամաս 2 շենքի № 10 հասցեի 77.75 (յոթանասունյոթ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ 1145430 վկայական) :

բ) Գյումրի Արագած 1 թաղամաս 2 շենքի №10 հասցեի բնակարանը 1994 թվականի թվականի հունիսի 08-ից հանձնված է բնակության (հիմք՝ Ժողովրդական պատգամավորների Գյումրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի հունիսի 08-ի №14 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Արագած 1 թաղամաս 2 շենքի №10 հասցեում հաշվառված բնակվում է 6 անձ (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց 2026 թվականի հուլիսի 31-ի № 42/94/20/238390-26 տեղեկանք, «Վել Մանո» համատիրության 2026 թվականի օգոստոսի 13-ի Վ/մ-5 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Հայկազ Արշալույսիի Ասատրյանի, Ռուզաննա Շահենի Ասատրյանի, Սամվել Հայկազի Ասատրյանի, Գայանե Հայկազի Ասատրյանի և Արշալույս Հայկազի Ասատրյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թվականի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի հուլիսի 31-ի N US-31072026-99-0520, N US-31072026-99-0515, N US-31072026-99-0521, N US-31072026-99-0522 և օգոստոսի 13-ի N US-13082026-99-0394 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի՝ Հայկազ Արշալույսի Ասատրյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Արագած 1 թաղամաս 2 շենքի №10 հասցեի բնակարանը վարձակալել է 1994 թվականի հունիսի 08-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու,իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ

անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի՝ Հայկազ Արշալույսի Ասատրյանի դիմումը մասամբ բավարարեց:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Արագած 1 թաղամաս 2 շենքի №10 հասցեի 77.75 (յոթանասունյոթ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Հայկազ Արշալույսի Ասատրյանին	ծնված՝ 1963 թվականին
2) Ռուզաննա Շահենի Ասատրյանին	ծնված՝ 1965 թվականին
3) Սամվել Հայկազի Ասատրյանին	ծնված՝ 1986 թվականին
4) Գայանե Հայկազի Ասատրյանին	ծնված՝ 1988 թվականին
5) Արշալույս Հայկազի Ասատրյանին	ծնված՝ 1990 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

2.Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Հայկազ Արշալույսի Ասատրյանին, Ռուզաննա Շահենի Ասատրյանին, Սամվել Հայկազի Ասատրյանին, Գայանե Հայկազի Ասատրյանին և Արշալույս Հայկազի Ասատրյանին:

3.Քաղաքացիներ՝ Հայկազ Արշալույսի Ասատրյանին, Ռուզաննա Շահենի Ասատրյանին, Սամվել Հայկազի Ասատրյանին, Գայանե Հայկազի Ասատրյանին և Արշալույս Հայկազի Ասատրյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Հայկազ Արշալույսի Ասատրյանին, Ռուզաննա Շահենի Ասատրյանին, Սամվել Հայկազի Ասատրյանին, Գայանե Հայկազի Ասատրյանին և Արշալույս Հայկազի Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2026-11-02 17:26:06 GMT+4

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ
(ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Քաղաք Գյումրի 2026թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«30» հոկտեմբերի 2026 **թվական** N 3145-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ԼՅՈՎԱՅԻ ՇԱԽՊԱԶՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Գայանե Լյովայի Շախպազյանը (անձնագիր՝ AV0575280, տրված՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ին 016-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Գյումրի Մ.Ավետիսյան 39Ա շենքի №8 բնակարանի հասցեում), 2026 թվականի օգոստոսի 17-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով քաղաք Գյումրի Մ.Ավետիսյան 39Ա շենք №8 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին, որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Ժողովրդական պատգամավորների Կումայրիի Շիրակի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հուլիսի 26-ի №10 որոշմամբ Մ.Ավետիսյան 39Ա շենքի 8 բնակարանը հատկացվել է Լյովա Աշոտի Շախպազյանի 3 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն և 2 աղջիկներին:

Լյովա Աշոտի Շախպազյանը մահացել է(հիմք՝ ԱԱ №156197մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Ժողովրդական պատգամավորների Կումայրիի Շիրակի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հուլիսի 26-ի №10 որոշմամբ տրված №8 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց 2026 թվականի տեղեկանք, «Գարուն» համատիրության տեղեկանք, Գայանե Լյովայի Շախպազյանի և Տատյանա Լյովայի Շախպազյանի անձնագրերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի դրույթներով՝ 2026 թվականի օգոստոսի 17-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2026 թվականի հոկտեմբերի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Գայանե Լյովայի Շախպազյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մ.Ավետիսյան 39Ա շենքի №8 հասցեի 64.0 (վաթսունչորս ամբողջ) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ 1376087 վկայական) :

բ) Գյումրի Մ.Ավետիսյան 39Ա շենքի №8 հասցեի բնակարանը 1991 թվականի հուլիսի 26-ից հանձնված է բնակության (հիմք՝ Ժողովրդական պատգամավորների Կումայրիի Շիրակի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հուլիսի 26-ի №10 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Մ.Ավետիսյան 39Ա շենքի №8 հասցեում հաշվառված է 8 անձ (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց 2026 թվականի օգոստոսի 5-ի տեղեկանք), բնակվում է 8 անձ (հիմք՝ «Գարուն» համատիրության 2026 թվականի օգոստոսի 5-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի Գայանե Լյովայի Շախպազյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թվականի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի օգոստոսի 11-ի ԱՏ-11082026-99-0540 տեղեկանք):

Քաղաքացի՝ Տատյանա Լյովայի Շախպազյանի Մարզ Շիրակ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Շիրակացու 16 դոս, 1 բնակարանի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի օգոստոսի 13-ի ԱՏ-13082026-99-0508 տեղեկանք):

ե) Քաղաքացի՝ Գայանե Լյովայի Շախպազյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Մ.Ավետիսյան 39Ա շենքի №8 հասցեի բնակարանը վարձակալել է 1991 թվականի հուլիսի 26-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու,իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի՝ Գայանե Լյովայի Շախպազյանի դիմումը մասամբ բավարարեց:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մ.Ավետիսյան 39Ա շենքի №8 հասցեի 64.0 (վաթսունչորս ամբողջ) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Գայանե Լյովայի Շախպազյանին ծնված՝ 1965 թվականին

   որպես սեփականություն:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Գայանե Լյովայի Շախպազյանին:

3. Քաղաքացի՝ Գայանե Լյովայի Շախպազյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Գայանե Լյովայի Շախպազյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2026.10.20 17:17:08 GMT+4

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ
(ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Քաղաք Գյումրի 2026թվականի